ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ
Վ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ №1
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ

էլ փոստ. ararat1@schools.am
գյուղ Արարատ հեռ. (0234-4-09-58)

№ 289 «09» 02 2021թ.

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Արարատ գյուղի Վ. Սարգսյանի անվ. N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (20 դասաժամ), երաժշտության (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),

2.Փաստաթուղթ(դիպլոմ)՝«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագիր պատճենը,

4.Ինքնակենսագրություն(Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սյուն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 12-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Արարատ գյուղի Վ. Սարգսյանի անվ. N1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Արարատ, Վ. Սարգսյան 40:

Տեղեկությունների համար զանգահարել՝(0234) 4-09-58 հեռախոսահամարով: